<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԹԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ կաթի կազմի և հատկությունների, կեղծման միջոցների, արատների, կաթի միջոցով մարդուն և մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունների, դրանց կանխարգելման միջոցառումների վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական պարապմունք՝ 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի կաթի կազմը, հատկությունները և արատները, 2) ներկայացնի կաթի միջոցով մարդուն և մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունները, դրանց կանխարգելման միջոցառումները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել կաթի կազմը, հատկությունները և արատները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է կաթի կազմը, 2) ներկայացնում է կաթի քիմիական հատկությունները, 3) ներկայացնում է կաթի ֆիզիկական հատկությունները, 4) ներկայացնում է կաթի մանրէաբանական հատկությունները,

	<p>5) ներկայացնում է կաթի արատները,</p> <p>6) ներկայացնում է կաթի կեղծման միջոցները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանքի միջոցով, որում կներառվեն կաթի կազմի, հատկությունների, արատների, կեղծման միջոցների և առանձին բաղադրիչների դերի վերաբերյալ հարցեր՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը ենթադրում է մեկ ճիշտ պատասխան: Ուսանողին կհանձնարարվի ընտրել ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կաթնայուղի, սպիտակուցների, ածխաջրերի, հանքային նյութերի, վիտամինների, միկրոտարրերի բնութագիրը,</li> <li>✓ կաթի ընդհանուր և ակտիվ թթվության բնութագիրը,</li> <li>✓ կաթի խտության, օսմոտիկ ճնշման, մակերևութային լարվածության, մածուցիկության, ջերմահաղորդականության հատկությունների բնութագիրը,</li> <li>✓ կաթի մանրէասպան հատկությունների բնութագիրը,</li> <li>✓ կաթի կերային բակտերիալ և մեխանիկական ծագման արատները,</li> <li>✓ կարևոր նշանակություն ունեցող կաթի կեղծման միջոցները (ջրով, յուղազուրկ կաթով, կերակրի սոդայով, ջրածնի պերօքսիդով, օսլայով և այլն):</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեստային հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ, ուսումնական տեսանյութեր, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>գործնական պարապմունք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել կաթի միջոցով մարդուն և մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունները, դրանց կանխարգելման միջոցառումները</p>

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) նկարագրում է ջերմամշակման ազդեցությունը կաթի հատկությունների, սննդային արժեքի և մանրէաբանական ցուցանիշների վրա,  2) ներկայացնում է կաթի միջոցով մարդուն փոխանցվող հիվանդությունները,  3) ներկայացնում է մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունները,  4) թվարկում է հիմնական միկրոօրգանիզմները, որոնք վտանգ են ներկայացնում ջերմամշակման չենթարկված կաթ կամ դրանից պատրաստված կաթնամթերք օգտագործող մարդկանց առողջության համար:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն կաթի միջոցով մարդուն և մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունների, դրանց կանխարգելման և վերահսկողության միջոցառումների վերաբերյալ հարցեր՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը ենթադրում է մեկ ճիշտ պատասխան: Ուսանողին կհանձնարարվի ընտրել ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կաթի միջոցով մարդուն փոխանցվող հիվանդությունները (տուբերկուլյոզ, բրուցելյոզ և այլն),</li> <li>✓ մարդուց՝ կաթի միջոցով տարածվող հիվանդությունները (դիֆթերիա, քուբեշ, որովայնային տիֆ և այլն),</li> <li>✓ ջերմամշակման չենթարկված կաթ կամ դրանից պատրաստված կաթնամթերք օգտագործող մարդկանց առողջության համար վտանգ ներկայացնող հիմնական միկրոօրգանիզմները (<i>Salmonella</i>, <i>Listeria monocytogenes</i>, <i>Escherichia coli</i>, <i>Campylobacter jejuni</i> և այլն):</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեստային հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ, ուսումնական տեսանյութեր, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ  գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սանիտարիայի և հիգիենիկ նորմերի պահանջները պահպանելու, հանրային առողջապահական նշանակություն ունեցող սննդամթերքի որակի կառավարման համակարգերի հիմնական սկզբունքների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական ուսուցում՝ 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պահպանի սանիտարիայի կանոնների պահանջները, 2) պահպանի հիգիենիկ նորմերի պահանջները, 3) ներկայացնի սննդամթերքի որակի կառավարման համակարգերի դերը սանիտարիայի պահպանման գործում:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Պահպանել սանիտարիայի կանոնների պահանջները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է սանիտարիայի սկզբունքները և դրանց նշանակությունը կաթնարդյունաբերությունում, 2) ներկայացնում է սննդամթերքի աղտոտման աղբյուրները, 3) ներկայացնում է արտադրական գործընթացներին ներկայացվող սանիտարական պահանջները, տարբեր իրավիճակներում պահպանում է սանիտարիայի կանոնների պահանջները, 4) ներկայացնում է լվացման և ախտահանման հիմնական սկզբունքները, CIP համակարգով լվացման առավելությունները, 5) դասակարգում է արտադրությունում օգտագործվող հիմնական լվացման և ախտահանիչ նյութերը, պատրաստում է աշխատանքային լուծույթներ, 6) կատարում է ավտոմատ և ոչ ավտոմատ լվացման ու ախտահանման աշխատանքներ:

**Գնահատման միջոցը**

Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանքի և գործնական հանձնարարության միջոցով: Թեստային առաջադրանք կատարելով՝ ուսանողն ընտրում է առաջադրանքի ճիշտ պատասխանը՝ տրված տարբերակներից: Գործնական հանձնարարության դեպքում ուսանողը, համաձայն տրված ցուցումների, պատրաստում է լվացող և ախտահանող աշխատանքային լուծույթներ, կատարում է անհրաժեշտ վլացման և ախտահանման աշխատանքներ, այդ թվում CIP, COP և/կամ SIP համակարգերով վլացման և ախտահանման աշխատանքներ, ինչպես նաև պահպանում է սանիտարական նորմերի պահանջները տարբեր իրավիճակային առաջադրանքների կատարման ժամանակ:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝

- ✓ «սանիտարիա» հասկացության սահմանումը և դրա բնութագիրը,
- ✓ սանիտարական նորմերի պահանջների պահպանման նշանակությունը սննդարդյունաբերությունում,
- ✓ աղտոտման շղթայի չորս օղակները՝ ազդանյութ-աղբյուր-փոխանցման եղանակ-օջախ, ուղղակի և խաչաձև աղտոտման եղանակների նկարագիրը, կաթը և կաթնամթերքը որպես միկրոօրգանիզմների գոյատևման և բազմացման աղբյուր,
- ✓ կաթնաթթվային մթերքի աղտոտման հնարավոր աղբյուրները (սարքավորումներ, մասնագիտական գործիքներ, օժանդակ պարագաներ, բեռնարկղներ, աշխատողներ, ընդունվող հումք, փաթեթավորման համար օգտագործվող նյութեր, միջատներ և կրծողներ, կուտակված փոշու կամ կեղտի տեղամասեր, կոյուղային, օդային և/կամ ջրային համակարգեր),
- ✓ արտադրական գործընթացներին ներկայացվող սանիտարական նորմերի պահանջները և դրանց պահպանումը տարբեր իրավիճակներում,
- ✓ պատշաճ արտադրական գործունեություն (Good Manufacturing Practices-GMPs), պատշաճ հիգիենիկ գործունեություն (Good Hygienic Practices-GHPs) և սանիտարական ստանդարտ ալգորիթմային գործունեություն (Sanitation Standard Operating Procedures-SSOPs) համակարգերի բնութագիրը և դրանց կարևորությունը սննդարդյունաբերությունում,
- ✓ վլացման և ախտահանման հիմնական սկզբունքների բնութագիրը ու վլացման արդյունավետության վրա

	<p>ազդող գործոնների նկարագիրը,</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ արտադրությունում օգտագործվող հիմնական վացող և ավտահանող նյութերի դասակարգումը,</li> <li>✓ հոսող ջրի, վացող միջոցների և ավտահանող նյութերի (գոլորշի, տաք ջուր և քիմիական ավտահանիչներ) օգտագործման սկզբունքները արտադրական սանիտարիայի պահպանման գործում,</li> <li>✓ հիմնական վացող և ավտահանող նյութերից աշխատանքային լուծույթների պատրաստումը, վացման և ավտահանման քայլերի հաջորդականությունը,</li> <li>✓ CIP (cleaning-in-place) ավտոմատ համակարգով վացման երկու հիմնական եղանակների (դատարկ տարողությունների վացում ցնցուղով և խողովակաշարերի վացում) բնութագիրը, այդ թվում հիմնական առավելությունների ու թերությունների նկարագիրը,</li> <li>✓ COP (cleaning-out-of-place) համակարգով վացման և ավտահանման քայլերի նկարագիրը, ներառյալ հիմնական առավելությունների ու թերությունների բնութագիրը,</li> <li>✓ SIP (steam-in-place) համակարգով ավտահանման աշխատանքների բնութագիրը, ներառյալ հիմնական առավելությունների ու թերությունների նկարագիրը և կիրառությունը,</li> <li>✓ ավտոմատ և ոչ ավտոմատ վացման ու ավտահանման աշխատանքների իրականացում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված թեստային հարցերին և կատարում է գործնական հանձնարարությունն առանց էական շեղումների:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ, ուսումնական տեսանյութեր, դիդակտիկ նյութեր, լաբորատոր սարքավորումներ և անհրաժեշտ նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Պահպանել հիգիենիկ նորմերի պահանջները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է անձնական հիգիենիկ նորմերի պահանջները,</li> <li>2) ներկայացնում է աշխատանքային հիգիենիկ նորմերի պահանջները,</li> </ol>

	3) պահպանում է հիգիենիկ նորմերի պահանջները տարբեր իրավիճակներում:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանքի և գործնական հանձնարարության միջոցով: Թեստային առաջադրանք կատարելով՝ ուսանողն ընտրում է առաջադրանքի ճիշտ պատասխանը տրված տարբերակներից: Գործնական հանձնարարության դեպքում ուսանողը, համաձայն տրված ցուցումների և իրավիճակի, պահպանում է անձնական և աշխատանքային հիգիենայի կանոնների պահանջները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ աշխատակիցների առողջական վիճակի, հիվանդությունների և վնասվածքների, մարմնի ու հագուստի մաքրության, վարքագծային բնույթի դրսևորումների կարգավորման և այցելությունին ներկայացվող հիգիենայի պահանջների ապահովման վերահսկողությունը՝ որպես անձնական հիգիենայի կանոնների պահպանման հիմնական ուղղությունները,</li> <li>✓ ձեռքերի լվացման և ախտահանման տեխնիկայի բնութագիրը և կիրառությունը,</li> <li>✓ ձեռնոցների և դիմակների օգտագործման դեպքերի նկարագիրը,</li> <li>✓ արտադրական տարածքներում և պահեստներում ոչ հիգիենիկ գործունեության ձևեր (սնվել, խմել, ծամել, ծխել, ինչպես նաև պահել սնունդ, խմիչք, ծխախոտային արտադրանք, զարդեր (վզնոց, մատանի, ականջօղ) կամ անձնական օգտագործման դեղամիջոցներ),</li> <li>✓ տարբեր իրավիճակներում (օրինակ, հումքի և օժանդակ նյութերի ընդունման, խառնուրդների պատրաստման, արտադրանքի փաթեթավորման, ճաշարանի այցելության, սանհանգույցից օգտվելու ժամանակ) հիգիենայի կանոնների պահանջների պահպանում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված թեստային հարցերին և կատարում է գործնական հանձնարարությունն առանց էական շեղումների:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, մասնագիտական գրականություն, լաբորատոր սարքեր, փորձանոթներ ու նյութեր, ուսումնական տեսանյութեր, իրավիճակային խնդիրներ, առաջադրանքներ և հարցաշարեր:
<b>Ուսուցման երաշխավորված</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել սննդամթերքի որակի կառավարման համակարգերի դերը սանիտարիայի պահպանման գործում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է «Կոդեքս Ալիմենտարիուս» սննդի միջազգային չափանիշների կիրառությանը,</li> <li>2) ներկայացնում է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետեր (ՎՎՀԿԿ/HACCP) համակարգի հիմնական սկզբունքները և ընթացակարգերը,</li> <li>3) ներկայացնում է որակի համալիր կառավարման (TQM) համակարգի հիմնական սկզբունքները և ընթացակարգերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվի սանիտարիայի պահպանման գործում սննդամթերքի որակի կառավարման համակարգերի դերի վերաբերյալ հարցեր՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը ենթադրում է մեկ ճիշտ պատասխան և կհանձնարարվի ընտրել ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ՄԱԿ-ի համաշխարհային պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) դերը «Կոդեքս Ալիմենտարիուս» սննդի միջազգային չափանիշների կիրառության գործում, «Կոդեքս Ալիմենտարիուս» ստանդարտների նպատակը և գործողության շրջանակը,</li> <li>✓ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետեր (ՎՎՀԿԿ / HACCP) համակարգի արդյունավետ աշխատանքի ապահովման համար նախադրյալ համակարգերի առկայություն (Պատշաճ հիգիենիկ պրակտիկա (GHP) և Պատշաճ արտադրական պրակտիկա (GMP)), ՎՎՀԿԿ / HACCP համակարգի յոթ սկզբունքները և դրանց կիրառման ընթացակարգերը (վտանգի վերլուծություն, հսկման կրիտիկական կետերի հատկորոշում, կրիտիկական սահմանի հատկորոշում, աուդիտի ընթացակարգերի սահմանում, ուղղիչ գործողությունների ծրագրի սահմանում, ստուգման ընթացակարգի սահմանում, փաստաթղթավորման և գրանցումների համակարգի ստեղծում),</li> <li>✓ որակի համալիր կառավարման (TQM) համակարգի հիմնական սկզբունքները և դրանց կիրառման ընթացակարգերը (արտադրական գործընթացների վերահսկման մեխանիզմների ստեղծում ու</li> </ul>

	<p>կատարելագործում, տեխնոլոգիական ամբողջ շղթայում արտադրության կազմակերպման գործում աշխատողների լիարժեք ներգրավման ապահովում և արդյունքների բազմակողմանի մշտադիտարկում ու գնահատում, որակի և ծառայությունների բարելավման պլանավորված և կառավարելի գործընթացների կազմակերպում, հաղորդակցական հոսքերի արդյունավետ կառավարում, համակարգային և ինտեգրացված կանոնակարգում, փաստերի վրա հիմնված որոշումների կայացում, որակի և ծառայությունների շարունակական բարելավման ապահովում):</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեստային հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ և ուսումնական տեսանյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԹՈՒ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՒՄՔԸ, ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-003
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել թթու կաթնամթերքի պատրաստման համար օգտագործվող կենդանական և բուսական ծագման հումքի, սննդային հավելումների ու օժանդակ նյութերի դասակարգման, դրանց կիրառության պայմանների վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական ուսուցում՝ 18 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<ol style="list-style-type: none"> <li>1) բնութագրի թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կենդանական ծագման հումքը,</li> <li>2) բնութագրի թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող բուսական ծագման հումքը,</li> <li>3) նկարագրի թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող սննդային հավելումները և օժանդակ նյութերը;</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բնութագրել թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կենդանական ծագման հումքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) դասակարգում է կենդանական ծագման հումքն՝ ըստ տեսակների,</li> <li>2) ներկայացնում է կենդանական ծագման հումքի կիրառության պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանք կատարելու միջոցով: Թեստային առաջադրանք կատարելով՝ ուսանողն ընտրելու է առաջադրանքի ճիշտ պատասխանը տրված տարբերակներից:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կենդանական ծագման հումքի դասակարգումն՝ ըստ տեսակների,</li> <li>✓ կենդանական ծագման հումքի կիրառության թույլատրելի նորմերը թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ,</li> <li>✓ կենդանական ծագման հումքի կիրառության պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, մասնագիտական էլեկտրոնային և տպագիր գրականություն, կենդանական ծագման հումք, լաբորատոր փորձանոթներ և սարքեր, ուսումնական տեսանյութեր, իրավիճակային խնդիրներ, առաջադրանքներ և հարցաշարեր:
<b>Ուսուցման երաշխավորված</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բնութագրել թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող բուսական ծագման հումքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) դասակարգում է բուսական ծագման հումքն՝ ըստ տեսակների, 2) բնութագրում է բուսական ծագման հումքի կիրառության պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանք կատարելու միջոցով: Թեստային առաջադրանք կատարելով՝ ուսանողն ընտրելու է առաջադրանքի ճիշտ պատասխանը տրված տարբերակներից: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> <li>✓ բուսական ծագման հումքի դասակարգումն՝ ըստ տեսակների,</li> <li>✓ բուսական ծագման հումքի կիրառության թույլատրելի նորմերը թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ,</li> <li>✓ բուսական ծագման հումքի կիրառության պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:</li> </ul> Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, մասնագիտական էլեկտրոնային և տպագիր գրականություն, բուսական ծագման հումք, լաբորատոր փորձանոթներ և սարքեր, ուսումնական տեսանյութեր, իրավիճակային խնդիրներ, առաջադրանքներ և հարցաշարեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Նկարագրել թթու կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող սննդային հավելումները և օժանդակ նյութերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) դասակարգում է սննդային հավելումները և օժանդակ նյութերն՝ ըստ տեսակների, 2) ներկայացնում է սննդային հավելումները և օժանդակ նյութերի կիրառության պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ,

	3) ներկայացնում է սննդային հավելումների և օժանդակ նյութերի կիրառման եղանակները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի թեստային առաջադրանք կատարելու միջոցով: Թեստային առաջադրանք կատարելով՝ ուսանողն ընտրելու է առաջադրանքի ճիշտ պատասխանը տրված տարբերակներից: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> <li>✓ օժանդակ նյութերի դասակարգումն՝ ըստ տեսակների,</li> <li>✓ սննդային հավելումների դասակարգումն՝ ըստ տեսակների,</li> <li>✓ սննդային հավելումների և օժանդակ նյութերի կիրառության թույլատրելի նորմերը թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ,</li> <li>✓ օժանդակ նյութերի լուծույթների պատրաստումը և դրանց կիրառման պայմանները թթու կաթնամթերքի արտադրության ժամանակ:</li> </ul> Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, մասնագիտական գրականություն, օժանդակ նյութեր, լաբորատոր փորձանոթներ և սարքեր, ուսումնական տեսանյութեր, իրավիճակային խնդիրներ, առաջադրանքներ և հարցաշարեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կաթի վերամշակման սարքավորումների նշանակության, կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի, դրանք նախապատրաստելու, աշխատանքային ռեժիմի բերելու, անվտանգության կանոնների վերաբերյալ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական պարապմունք՝ 42 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԹԿՊ-4-19-002 «Սանիտարիայի և հիգիենայի պահպանում» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> <li>1) սահմանի ջերմափոխանակման գործընթացը, թվարկի առավել տարածված ջերմակիրների անվանումները,</li> <li>2) դասակարգի ջերմափոխանակման սարքավորումները, ներկայացնի դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ներկայացնի կեղտամաքրիչի, սերզատի, հոմոգենիզատորների, էմուլգատորների և դիսպերգատորների դասակարգումը, նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>4) շահագործի վերամշակման սարքավորումները, կարգավորի դրանց աշխատանքի օպտիմալ ռեժիմները, վերացնի վերամշակման սարքավորումների աշխատանքային թեթև անսարքությունները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Սահմանել ջերմափոխանակման գործընթացը, թվարկել առավել տարածված ջերմակիրների անվանումները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) սահմանում է ջերմափոխանակման գործընթացը և տալիս է ընդհանուր տեղեկություններ այդ գործընթացից,</li> <li>2) թվարկում է կաթի և կաթնամթերքի արտադրությունում առավել տարածված ջերմակիրների անվանումները և նշանակությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի հարց ու պատասխանի միջոցով, որտեղ ուսանողին կտրվեն հարցեր ջերմափոխանակման գործընթացի, դրա հաղորդման եղանակների, ջերմակիրների տեսակների վերաբերյալ: Ծրագրային մանրամասներ՝ <ol style="list-style-type: none"> <li>✓ ջերմափոխանակման գործընթացը, կաթի և կաթնամթերքի արտադրությունում առավել տարածված ջերմակիրների բնութագիրը,</li> <li>✓ կաթնարդյունաբերության մեջ օգտագործվող ջերմակիրների տեսակները, դրանց բնութագրերը:</li> </ol>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հարցերին տվել է ճիշտ պատասխաններ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, ուսումնական տեսանյութեր, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական պարապմունք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Դասակարգել ջերմափոխանակման սարքավորումները, ներկայացնել դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է դասակարգում ջերմափոխանակման սարքավորումները՝ ըստ նշանակության, գործողության, ջերմակրի, հեղուկների շարժման ուղղության, կառուցվածքի, սեկցիաների, 2) ճիշտ է ներկայացնում թիթեղավոր (պաստերացնող և սառեցնող) և խողովակավոր կայանքների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է ներկայացնում պաստերացման-պաղեցման տարողությունների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, 4) ճիշտ է ներկայացնում ստերիլացման (տարայում և հոսքային) սարքավորումների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի թեսթային առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն ջերմափոխանակման սարքավորումների դասակարգման, դրանց կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ հարցեր՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը ենթադրում է մեկ ճիշտ պատասխան և կհանձնարարվի ընտրել ճիշտ պատասխանը: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> <li>✓ ջերմափոխանակման սարքավորումների դասակարգումը՝ ըստ նշանակության, գործողության, ջերմակրի, հեղուկների շարժման ուղղության, կառուցվածքի և սեկցիաների,</li> <li>✓ թիթեղավոր և խողովակավոր տեղակայանքների կառուցվածքը ու աշխատանքի սկզբունքը,</li> <li>✓ պաստերացման-պաղեցման տարողությունների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>✓ ստերիլացման (տարայում և հոսքային) սարքավորումների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</li> </ul>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեսթային հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեսթեր, ուսումնական տեսանյութեր, սարքավորումներ, ապարատներ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական պարապմունք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել կեղտամաքրիչի, սերզատի, հոմոգենիզատորների, էմուլգատորների և դիսպերգատորների դասակարգումը, նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում կեղտամաքրիչի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հերմետիկ և ինքնաթափ սերզատների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>3) ներկայացնում է հոմոգենիզատորների տեսակները, դրանց տարբերությունները, նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>4) ներկայացնում է էմուլգատորների, դիսպերգատորների տեսակները, դրանց տարբերությունները, նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեսթային առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կներկայացվի կեղտամաքրիչի, սերզատի նշանակության, հոմոգենիզատորների, էմուլգատորների և դիսպերգատորների դասակարգման, կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ առաջադրանքներ՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, որոնցից մեկը ենթադրում է մեկ ճիշտ պատասխան և կհանձնարարվի ընտրել համապատասխան առաջադրանքներին վերաբերող ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կեղտամաքրիչի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>✓ հերմետիկ և ինքնաթափ սերզատների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>✓ հոմոգենիզատորների հիմնական տեսակները, դրանց տարբերությունները, նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,</li> <li>✓ էմուլզատորների, դիսպերգատորների հիմնական տեսակները, դրանց տարբերությունները, նշանակությունը և կառուցվածքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեսթային հարցերին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեսթեր, ուսումնական տեսանյութեր, սարքավորումներ, ապարատներ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Շահագործել վերամշակման սարքավորումները, կարգավորել դրանց աշխատանքի օպտիմալ ռեժիմները, վերացնել վերամշակման սարքավորումների աշխատանքային թեթև անսարքությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նախապատրաստում է վերամշակման սարքավորումները, դրանք բերում է աշխատանքային վիճակի,</li> <li>2) ստուգում է խողովակաշարերի հավաքման ճշտությունը,</li> <li>3) պահպանում է սարքավորումների աշխատանքի համար սահմանված ջերմային օպտիմալ ռեժիմները,</li> <li>4) ճիշտ է շահագործում արտադրամիջոցները, վերամշակման սարքավորումները, հետևում է չափիչ-ստուգիչ սարքերի ցուցմունքներին և կարգավորում ավտոմատ կարգավորման համակարգերի աշխատանքը՝ համապատասխան տեխնոլոգիական պահանջներին,</li> <li>5) ճիշտ է կատարում արտադրամիջոցների թեթև անսարքությունների վերացման աշխատանքները,</li> <li>6) իրականացնում է սարքավորումների լվացման և ախտահանման աշխատանքներ՝ ըստ տեխնիկական հրահանգների,</li> <li>7) պահպանում է անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի գործնական առաջադրանքների միջոցով, որի դեպքում ուսանողին կհանձնարարվի</p>

	<p>շահագործել վերամշակման սարքավորումները, կարգավորել դրանց աշխատանքի օպտիմալ ռեժիմները, վերացնել վերամշակման սարքավորումների աշխատանքային թեթև անսարքությունները՝ ըստ տեխնիկական հրահանգների:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ վերամշակման սարքավորումների, ապարատների, խողովակաշարերի նախապատրաստումն՝ ըստ փուլերի,</li> <li>✓ վերամշակման սարքավորումների շահագործում, դրանց աշխատանքի օպտիմալ ռեժիմների պահպանում, չափիչ-ստուգիչ սարքերի ցուցմունքների և ավտոմատ կարգավորման համակարգերի աշխատանքի համապատասխանության կարգավորում՝ ըստ տեխնոլոգիական պահանջների,</li> <li>✓ վերամշակման սարքավորումների, ապարատների աշխատանքային թեթև անսարքությունները և դրանց վերացման ձևերը,</li> <li>✓ սարքավորումների լվացման և ախտահանման աշխատանքների իրականացման առանձնահատկությունները,</li> <li>✓ աշխատանքի անվտանգության կանոնները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը կատարում է գործնական առաջադրանքները առանց էական շեղումների:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, ուսումնական տեսանյութեր, վերամշակման ենթակա կաթնային խառնուրդ, սարքավորումներ, ապարատներ, չափիչ-ստուգիչ սարքեր, լվացման և ախտահանման նյութեր, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ:</p> <p>Գործնական պարապմունքների մի մասը նպատակահարմար է անցկացնել արտադրական կազմակերպություններում:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական պարապմունք՝ 16 ժամ</p>
<p><b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԹԻ ԵՎ ԿԱԹՆԱԹԹՎԱՅԻՆ ՄԹԵՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԼՑՄԱՆ, ՏԱՐԱՅԱՎՈՐՄԱՆ, ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՈՍՔԱԳԾԵՐ»</b></p>	
<p><b>Մոդուլի դասիչը</b></p>	<p>ԹԿՊ-4-19-005</p>

<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կաթի և կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման, տեղափոխման սարքավորումների, հոսքագծերի նշանակության, կառուցվածքի, նախապատրաստման, շահագործման և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական պարապմունք՝ 22 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԹԿՊ-4-19-002 «Սանիտարիայի և հիգիենայի պահպանում» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) շահագործի կաթի և կաթնաթթվային մթերքի տեղափոխման պոմպերը, 2) շահագործի կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումները և հոսքագծերը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Շահագործել կաթի և կաթնաթթվային մթերքի տեղափոխման պոմպերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) դասակարգում է կաթի և կաթնաթթվային մթերքի տեղափոխման պոմպերը, 2) ներկայացնում է կենտրոնախույս և մխոցային պոմպերի նշանակությունը և աշխատանքի սկզբունքը, 3) ներկայացնում է ատամնանիվային և մեմբրանային պոմպերի նշանակությունը և աշխատանքի սկզբունքը, 4) ճիշտ է շահագործում կաթի և կաթնաթթվային մթերքի տեղափոխման պոմպերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Թեսթային առաջադրանքում ներառված կլինեն հարցեր կաթի և կաթնամթերքի տեղափոխման պոմպերի դասակարգման, պոմպերի տեսակների, կառուցվածքի, նշանակության և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, կհանձնարարվի ընտրել ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի նախապատրաստել և շահագործել պոմպերը:

	<p>Ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կաթի և կաթնամթերքի տեղափոխման պոմպերի դասակարգումը,</li> <li>✓ պոմպերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը,</li> <li>✓ աշխատանքի անվտանգության կանոնները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը թեստային հարցերին տվել է ճիշտ պատասխաններ, ճիշտ է նախապատրաստել և շահագործել պոմպերը՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեսթեր, ուսումնական տեսանյութեր, կաթնային հումք, պոմպ, սարքավորումներ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ: Գործնական պարապմունքների մի մասը նպատակահարմար է անցկացնել արտադրական կազմակերպություններում:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Շահագործել կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումները և հոսքագծերը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ներկայացնում է կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումների, հոսքագծերի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, 2) կատարում է կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումների, հոսքագծերի ճիշտ շահագործում:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի թեսթային և գործնական առաջադրանքների միջոցով: Թեսթային առաջադրանքում ներառված կլինեն հարցեր կաթնաթթվային մթերքի տարայավորման, փաթեթավորման սարքավորումների և հոսքագծերի շահագործման վերաբերյալ հարցեր՝ իրենց ենթադրյալ պատասխաններով, կհանձնարարվի ընտրել համապատասխան ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի շահագործել կաթնաթթվային մթերքի տարայավորման, փաթեթավորման սարքավորումները և հոսքագծերը՝ ըստ տեխնիկական հրահանգների: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p>

	<ul style="list-style-type: none"> <li>✓ կաթնաթթվային մթերքների պատրաստման սարքավորումները,</li> <li>✓ կաթնաթթվային մթերքների լցման, տարայավորման, փաթեթավորման սարքավորումները,</li> <li>✓ կաթնաթթվային մթերքների լցման-փաթեթավորման հոսքագծերը,</li> <li>✓ աշխատանքի անվտանգության կանոնները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեսթային հարցերին և գործնական առաջադրանքները կատարում է առանց էական շեղումների:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեսթեր, ուսումնական տեսանյութեր, տարայավորման, փաթեթավորման սարքավորում և/կամ հոսքագիծ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ:</p> <p>Գործնական պարապմունքների մի մասը նպատակահարմար է անցկացնել արտադրական կազմակերպություններում:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական պարապմունք՝ 14 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կաթը և հումքը ընդունելու, պարզ հաշվարկներ կատարելու, կաթը մթերման ընթացքում առաջացող հնարավոր խնդիրները լուծելու, կաթը մեխանիկական և ջերմային մշակման ենթարկելու, պաղեցման ռեժիմները կարգավորելու վերաբերյալ գիտելիք, հմտություններ և կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական պարապմունք՝ 22 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԹԿՊ-4-19-001 «Կաթի կազմը և հատկությունները», ԹԿՊ-4-19-002 «Սանիտարիայի և հիգիենայի պահպանում», ԹԿՊ-4-19-004 «Կաթի

	վերամշակման սարքավորումներ» և ԹԿՊ-4-19-005 «Կաթի և կաթնաթթվային մթերքի պատրաստման, լցման, տարայավորման, փաթեթավորման, տեղափոխման սարքավորումներ և հոսքագծեր» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) իրականացնի կաթի ընդունում և նախնական պաղեցում, 2) կատարի կաթի վերամշակում:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իրականացնել կաթի ընդունում և նախնական պաղեցում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է կաթի ընդունման համար անհրաժեշտ պայմանները, 2) կատարում է կաթի նմուշառում և զգայաբանական գնահատում, 3) ընդունում է կաթը և հումքը, իրականացնում է կաթի վերահաշվարկ, 4) ներկայացնում է կաթի տեսակավորման պայմանները՝ ըստ ընդունվող կաթի ցուցանիշների և պատրաստվող կաթնաթթվային մթերքի տեսակի, 5) ներկայացնում է կաթի ընդունման ժամանակ առաջացող հնարավոր խնդիրները, առաջարկում է լուծումներ՝ ըստ անհրաժեշտության, 6) ներկայացնում է կաթի նախնական պաղեցման և պահպանման պայմանները, կատարում է կաթի պաղեցում՝ կաթի հետագա վերամշակման համար:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը կստուգվի գործնական առաջադրանքների միջոցով, որով ուսանողին կառաջարկվի իրականացնել կաթի ընդունում և նախնական պաղեցում՝ ըստ տեխնիկական և տեխնոլոգիական հրահանգների: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝ ✓ կաթի նմուշառման տեխնիկան, զգայաբանական գնահատում և տարրական անալիզների կատարման եղանակները, ✓ կաթի ընդունման համար անհրաժեշտ պայմանները (քիմիական, մանրէաբանական և անասնաբուժական լաբորատորիաների թույլատվությունների առկայություն, հրահանգի առկայություն),

	<ul style="list-style-type: none"> <li>✓ կաթի ընդունման, վերահաշվարկի իրականացման կարգը,</li> <li>✓ կաթի նախնական պաղեցման և պահպանման անհրաժեշտությունը և պայմանները</li> <li>✓ կաթի ընդունման ժամանակ առաջացող հնարավոր տարածված խնդիրները և դրանց լուծման ուղիները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է առանց էական շեղումների:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, ուսումնական տեսանյութեր, կաթնային հումք, նմուշառման գործիք, սարքավորումներ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ: Գործնական պարապմունքների մի մասը նպատակահարմար է անցկացնել արտադրական կազմակերպություններում:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ  գործնական պարապմունք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կատարել կաթի վերամշակում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նկարագրում և իրականացնում է կաթի մեխանիկական մշակում (կեղտամաքրում, սերզատում, նորմալացում և համասեռացում),</li> <li>2) բնութագրում է «կաթի նորմալացում» հասկացությունը կաթնային խառնուրդներ պատրաստելու ժամանակ և այն իրականացնելու եղանակները,</li> <li>3) իրականացնում է կաթի ջերմամշակում, հետևում և կարգավորում է ջերմամշակման ռեժիմները՝ ըստ տեխնոլոգիական հրահանգների և պահանջների,</li> <li>4) իրականացնում է կաթի պաղեցում՝ պահպանելով պաղեցման ռեժիմները և կաթի պահպանման պայմանները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի գործնական առաջադրանքների միջոցով, որով ուսանողին կառաջարկվի կատարել կաթի վերամշակում և պատրաստել կաթնային խառնուրդներ՝ ըստ տեխնիկական և տեխնոլոգիական հրահանգների:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կաթի մեխանիկական մշակման (կեղտամաքրում, սերզատում, նորմալացում և հոմոգենացում) տեխնոլոգիան,</li> <li>✓ կաթնային խառնուրդներ պատրաստելու ժամանակ «կաթի ստանդարտացում» հասկացության բնութագրումը և</li> </ul>

	<p>այն իրականացնելու եղանակները՝ ըստ յուրի և / կամ յուղազուրկ չոր կաթնային մնացորդի առկայության (անյուղ կաթի ավելացում, կաթնասերի հեռացում կամ ավելացում, խտացված և / կամ չորացված կաթի ավելացում),</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կաթի ջերմային մշակման տեխնոլոգիան (ցածր ջերմաստճանային մշակում, պաստերացում, ուլտրապաստերացում),</li> <li>✓ կաթի պաղեցման և պահպանման տեխնոլոգիական առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է առանց էական շեղումների:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մեթոդական և տեղեկատու գրականություն, թեստեր, ուսումնական տեսանյութեր, սարքավորումներ, դիդակտիկ և այլ անհրաժեշտ նյութեր ու պարագաներ: Գործնական պարապմունքների մի մասը նպատակահարմար է անցկացնել արտադրական կազմակերպություններում:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական պարապմունք՝ 12 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԹՎԱՍԵՐԻ ԵՎ ԹԹՎԱՍԵՐԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԹԿՊ-4-19-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել թթվասերի և թթվասերային մթերքի պատրաստման, դրա ապրանքային տեսքի ապահովման գործընթացների իրականացման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական պարապմունք՝ 34 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԹԿՊ-4-19-003 «Թթու կաթնամթերքի արտադրությունում օգտագործվող հումքը, սննդային հավելումները և օժանդակ նյութերը» և ԹԿՊ-4-19-006 «Կաթի ընդունման և վերամշակման իրականացում» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի թթվասերի և թթվասերային մթերքների արտադրության ընդհանուր տեխնոլոգիան,</li> <li>2) պատրաստի թթվասեր և ապահովի դրա ապրանքային տեսքը,</li> <li>3) պատրաստի թթվասերային մթերք և ապահովի դրա ապրանքային տեսքը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել թթվասերի և թթվասերային մթերքների արտադրության ընդհանուր տեխնոլոգիան</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տարբերակում է թթվասերը և թթվասերային մթերքները,</li> <li>2) թվարկում է հումքին, սննդային հավելումներին ու օժանդակ նյութերին ներկայացվող պահանջները,</li> <li>3) ներկայացնում է թթվասերի և թթվասերային մթերքի արտադրության տեխնոլոգիան և առանձնահատկությունները,</li> <li>4) ներկայացնում է կաթնաթթվային խմորումը,</li> <li>5) ներկայացնում է թթվասերի և թթվասերային մթերքների արատները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը կստուգվի կստուգվի հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հարցեր թթվասերի և թթվասերային մթերքների դասակարգման, հումքին, սննդային հավելումներին և օժանակ նյութերին ներկայացվող պահանջների, դրանց պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունների, արատների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ թթվասերի և թթվասերային մթերքների դասակարգումը,</li> <li>✓ հումքին, սննդային հավելումներին և օժանդակ նյութերին ներկայացվող պահանջները,</li> <li>✓ կաթնային խառնուրդի պատրաստման բաղադրագրերից, տեխնիկական և տեխնոլոգիական հրահանգներից օգտվելու կարգը,</li> <li>✓ թթվասերի և թթվասերային մթերքների արտադրության ընդհանուր տեխնոլոգիան և առանձնահատկությունները,</li> <li>✓ կաթնային խմորման ձևերը՝ ըստ տեսակի,</li> <li>✓ թթվասերի և թթվասերային մթերքների արատները (համի, հոտի, գույնի և կոնսիստենցիայի), դրանց</li> </ul>

